Արևելեան գպրոցասիրաց ընկերութեան և Աղջկերաց առաջնորդին է յանձնված, ինչ կը նշանակեն «Արբաղան և Արբաղանագոյն հայրեր, տուէք մեր փողերը, չենք կամենում մեր դպրոցը, մեր գուլակները մեռնում են սովից» անտեղի և նենգամիտ խօսքերը, եթէ ոչ անվայել միջոցով իրան կարեկցող անձն ձեռացնել, խօսել խեղճ ժողովուրդը, փորձանքի մէջ ձգել նորան և միանգամայն ծաղել նորա բանականութիւնը։ Եթէ ուրիշ անցեալ նպատակ ունի Ց. Մ. կամ նորա նմանները, թող յայտնի ասէ, ապա թէ ոչ—Վեհ. Կաթողիկոսի այսպիսի օգուտէս, հաստատապես հիմն և նպատակայարմար տնօրէնութենից յետոյ յիշված գումարի մասին, որից զոհ պիտի լինին թէ նուիրողները, թէ նորա որոնց համար նուէրներ եղած են և թէ ժողովրդի ներկայի և ապագայի մասին լրջմիտ մտածողները, առանց կամենալու ամենևին ուշք դարձնել Սինոդի օրագրութեամբ հրատարակված ծիշդ տեղեկութիւններին, ինչ կը նշանակէ յանդգնել և հարցնել թէ «ինչ արեց Էջմիածինը»։

Սա մի և նոյն է, ինչ որ Պիտասը ասաց Ն. Հայ է ճշմարտութիւնը։ Հարցը մեր Տէր և Փրկիչ Յիսուսին ասելուց յետոյ, չը կամենար նորանից պատասխան իմանալ և դուրս գնաց։

Երբ սոփի ձայնը սառուցվեցաւ, Վեհ. Հայրապետի տնօրինութեամբ Սինոդը զանազան վճռաձևեր պատուէրներ ուղարկեց նուէրներ ժողովելու յօգուտ սովատանջ Հայերի և շուտ հասցնելու կամ Էջմիածնին կամ Վան յանձնաժողովին։ Այսուեղ ևս տնօրինված է եկած գումարներն անմիջապէս հասցնել սովեալների համար Կ. Պոլսում սահմանված Ցանձնաժողովին Պրլպլենկեան վանական տան միջոցով Թիֆլիսում։ Արդ Վեհ. Հայրապետի այսպիսի տնօրինութենից յետոյ, հրատարակել թէ «մի գրեսէ, ինչ միտակին պիտի հանդիպեն սովեալների տնունով հաւաքված գումարները և ամեն տեղ նուիրատու անձներին մոլորեցնել և կասկածի մէջ ձգել, և նուիրողների սիրտը կոտրել, այսպիսի վարմունքը յօգուտ սոված եղբարների խօսել և նոցա օգնութեան ձեռք մեկնել կը նշանակէ՞ թէ ի՞նչա սոված ների խօսել և նոցա սոված զաւակներին սովից սըպանելուն նպաստել, սովից մեռնող մանուկներից քանի մի կոր հաց խլել կը նշանա՞ կէ՞։ Թող մտածէ Ց. Մ...

(Արարատ)

ՆԱՄԱԿ Վ. ԱԴՈՒԼԻՍԻՑ

—

31 մարտի

«Մշակի ընթերցողներին արդէն յայտնի է Ագուլիսում տիրած հայի սաստիկ թանգութիւնը. ալիւրի պուդը բարձրացաւ 7—8 բուբլի. դա մի այնպիսի հրէշաւոր ցրիվ է, որ ոչ միայն անպատի չէ ժողովրդի չքաւոր դասին, այլ մինչև անգամ փոքր ի շատէ միջոց ունեցողներին։ Ագուլեցին սովոր էր ալիւրի մէկ պուդը գնել ոչ աւելի քան 1 բուբլով, այժմ սահմանված է 8 բուբլի վճարել։ այսպիսի թանգութիւն երբէք տեսնված չէ մեր կողմերում։ Շատերը սկսեցին փոստայով ալիւր բերել տալ Թիֆլիսից, բայց փոստը մէկ պուդից աւելի չէ ընդունում։ Ինչ պէտք է անեն այն թշուառները, որոնք ոչ Թիֆլիսից ուզարկող ունեն և ոչ փող.

Ժողովրդի այդ դժբախտ վիճակին ոչ սակաւ դարման տարաւ պ. Բ. Տէր-Մինասեանցը, որը անցեալ տարվայ վերջերում, որպէս դեսպան Նախիջևանի գաւառի կողմից ուղարկվեցաւ Թիֆլիս։ Պարսկի ախտատութեամբ բաւական նշանաւոր գումար ստացվեցաւ տերութեան զանազաններից մինչև գաւառի չքաւորներին բաժանելու համար, որ մի մեծ օժանդակութիւն պէտք է հասցնել այժմեան սարսափելի թանգութեան ժամանակ։ Պ. Տէր-Մինասեանի ախտատութեամբ այժմ գնված և պատրաստ է Պարսկաստանում 1000 թաղվար (27,000 պուդ) ցորեան, զէպի մեր կողմերը տեղափոխելու համար, եթէ այդ պակաղը չուտով համի, ժողովրդի վիճակը մի մեծ վտանգից ազատված կը լինի։

Պ. Տէր-Մինասեանի եղբայրների մարդասիրութիւնը այժմեան թանգութեան ժամանակ անկեղծ համակրութեան արժանի է։ Նրանց ջանքով Ագուլիսում բացված է մարտի 15-ից հացթխոցի մի խանութ, որտեղից բոլորովին չքաւորները ձրի հաց են ստանում, իսկ միջակ կարողութեան տէրերը պուդը 2 բ. 80 կոպէկով։ Այլ ևս չեմ խօսում այն մանաւոր բարերարութիւնների մասին որ նրանք անում են յայտնի կամ ծածուկ կերպով։

Ագուլիսի չքաւորների մասին անտարբեր չը գտնվեցաւ նոյն իսկ հասարակութիւնը, որ իր միջից մի գումար հաւաքեց թիֆլիսից ալիւր բերել տալու և աղքատներին էժան գնով վաճառելու համար։ Բայց տակաւին մի նշանաւոր զորձողութիւն այդ մասին չէ կատարված։ Ագուլիսում կայ հին ժամանակներից հաւաքված և աղքատների անունով անգործ պառված մի գումար, յայտնի չէ ինչ նպատակով։ Եթէ աղքատները իրանց այժմեան ամենադժուարին վիճակի մէջ օգուտ չեն քաղի միայն գումարից, այլ ևս ինչ միաք կայ աղքատների անունով փողեր հաւաքել և պահել. գոնէ նրա մի մասը գործ դնէին չքաւորների վիճակը դիւրացնելու համար։

Մի քանի խօսք էլ մեր դպրոցների մասին։ Այդ տարի մեր հոգաբարձուները, մեր տեսուչը ու մեր վարժապետները կարողացան շատ լաւ յարմարացնել դպրոցների դրութիւնը արտաքին հանգամանքների հետ։ Եթէ դրսում հացի թանգութիւնը կայ, ժողովուրդը բաղցած է մնում,—դպրոցների մէջ ուսման և կրթութեան կատարեալ սով է տիրում։ Երեք հոգաբարձուներից մէկը հրամարական է տուած, երկրորդը իր մենութիւնովն է զբաղված, երրորդը մի անփորձ երիտասարդ է. չը գիտէ թէ ինչ պիտի անէ։ Ցեսուչը և վարժապետները օրեր, ժամեր և բոլշներ են համարում, թէ երբ կը լինի, որ յուսիս ամիսը գայ, որ քննութիւնները վերջացնեն և թողնեն փախչեն։ Իրաւունք էլ ունեն. մեր աղաների կամայականութեանը ով կը դիմանայ...

Զար լեզուները ասում են, որ մեր դպրոցների այսպէս թշուառ դրութեան մէջ պահելու գլխաւոր պատճառն այն է, որ մայիս ամիսը մտնում է և այդ ամսում կը լրանայ պայմանաժամը, երբ դպրոցների բարերարները պէտք է վճարեն իրանց մեռ զտնված դպրոցական փողերը, որոնց համար իր ժամանակին այնքան ամրակ և խոստմութիւններ բարձրացան։ Բարերարները զուցէ այս անգամ ևս ասէի են որոնում ասելու. ինչու համար տանք մեր փողերը, երբ այդ դպրոցներից ոչինչ չէ կարելի սպասել...

Մեր դպրոցների անախանձելի դրութեան պատճառով մի քանի տիկիններ այժմ մասնաւոր վարժարաններ են բաց արել և երկու տեղից ևս եբեխաներ են կարդացնում. դա բաւական հարված տուեց դպրոցների եկամտին, թէ աշակերտների և թէ աշակերտուհիների թիւը պակասացնելով։

Ագուլեցիք, որ սովորութիւն ունէին իրանց եկեղեցիներով պարծենալ, այժմ վերջինների դրութիւնը նոյնպէս ոչ սակաւ անհանգիստի է։ Ս. Գրիգորատփոր եկեղեցին, որ 100-ից աւել ծուխ ունի, մեծ պասի այդ ապաշխարութեան օրերում դուռը փակված է, որովհետև եկեղեցու մէջ քանանան տէր Մ. մի քանի պարմանների շնորհիւ հալածված է։ Ը գիտեմ, ժողովուրդը ինչով է մեղաւոր, կամ ինչու առանց ժամի և առանց աղօթքի պէտք է մնայ, մի քանի ազանների քէֆը տեղը բերելու համար։ Այս տարի առհասարակ քահանաների հալածանք կայ Ագուլիսում. վերին Գետի թաղի տէրտէրից էլ են ազանգվել. և տէր Մովսէսի պաշտօնը պ. ազանգվեցի շնորհիւ կատարում է մի թաթարական քահանայ։

Ոռդուբաթ քաղաքի ամբողջ հայ ժողովուրդը ոչ մի քահանայ չունի, և մեծ պասուայ համար հրաւիրեցին Ներքին Ագուլիսի տէր Աւետիքին։ Բայց չուտով յիշեալ քահանան հրաման ստացաւ տեղուոյս հոգ. իշխանութեան խելացնոր զործակալից և պ. զանձապետից, որ չը համարձակվի Ոռդուբաթ գնալ և ժողովրդին հոգեոգակս մխիթարել, գոնէ այժմեան ապաշխարութեան օրերում։ Բայց մի և նոյն գործակալը և պ. զանձապետը այսպեսակ կամայականութիւններից յետոյ իրանց թոյլ են տալիս Գոռիսեանց գաւառի բոլոր քահանաներին և երեցփոխանների հաւաքել «ինտրանտանտեղին» և կարդալ Էջմիածնի երեսեի շրջաբերականը, «առանց յայտնվանց» հաւաքել ազգաբարական չնչագրամը, լուսագիրը և այլ այս տեսակ զրամիներ... Մեր ժողովրդի քաղցած փորին այդ էր պակաս...

* *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մի քանի հայ թատրոնասէրներ խնդրում են մեզ յայտնել, որ կիրակի, մայիսի 11-ին, Արծրունու թատրոնում տալու են մի ներկայացումն, խաղալու են՝ առաջին անգամ I «Հաշտարար զաւակորի մասյ» կոմեդիա 3 արար. փոխադրութիւն Ց. Տէր-Գրիգորեանի, պիեսան յարմարեցրած է Թիֆլիսի կեանքին և II «Ցնոտ», վոդեվիլ I արար. թարգմ. Ց. Տէր-Գրիգորեանի։ Երկրորդ և երրորդ արար. անտրակտի մէջ տ. փաշայեան-Տէր-Գրիգորեան կերգէ։

—

ԱԳՈՒԼԻՍԻՑ հեռագրում են մայիսի 4-ից, որ ցորենը այնտեղ յանկարծ էժանացաւ։ Այժմ պուդը արժէ 4 բուբլ։ Ագուլեցիները խնդրում են այլ ևս չուղարկել ցորեն Թիֆլիսից։

—

«Голосъ» լրագրում կարդում ենք, որ Մեծ Իշխան Կովկասեան փոխարքան առաջարկել է Բարձրագոյն կառավարութեանը հիմնել Անդրկովկասի երկու Նահանգներում ուսուցչական դպրոցներ, մինը Գանձակի Նահանգում վրացիների համար, իսկ միւսը Երևանի Նահանգում հայերի և թուրքերի համար։

—

Գրիգոր Արծրունի արդէն պատրաստել է իր հայերէն դասախօսութիւնը «Լույսի մասին Հայաստանում» և դիտաւորութիւն ունի կարդալ այդ դասախօսութիւնը մայիսի 12-ին, երկուշաբթի օր։

—

Թիֆլիսցնոսկ պ. Ն-ից ստացանք 2 բուբլ յօգուտ վանի սովատանջների։

—

«Լրաց Փիրէբան» լրագրի խմբագիր պ. Մեսրոպ յանձնել է մեզ 50 ք. 68 կ., որ նա ստացել է ԲԱԹՈՒՄԻ մէջ յօգուտ Երևանի սովածների տուած վրաց սիրոզների ներկայացումից։ Այդ փողերը, փոստի ծախսը հանելով, կուղարկենք Երևանի պ. քաղաքագլխին աղքատներին բաժանելու համար։

—

Ստացանք պ. Ս. Հովուեանցից դարձեալ 40 բ. 25 կոպ. յօգուտ վանի սովածների, որ պարոնը մի քանի երիտասարդների օգնութեամբ ժողովել է հանգանակութեամբ Թիֆլիսի Վանքի մայր-եկեղեցու գաւթում։ Նուիրատուների ցուցակը կը տըպագրենք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆԵՐ ԱԼԲԱՆԻԱՅԻ ՄԷՋ

—

Լրագիրները հաղորդում են հետևեալը։ Զէրնոգօրցիների սահմանների վրա, Պրզանիայում կատարվող անցքերը եւրոպական հասարակութեան ուշադրութեանը չեն արժանանում։ Հեռագիրների մի շարք, որոնք հաղորդում են այրանցիների զինուորվելու և նրանց վճռի մասին՝ արգելել Զէրնոգօրցիային գրաւել այն երկիրը, որ տուած է նրան Բ. Գանից, առանց ուշադրութեան կարդացվում է և արձագանք չէ գտնում ոչ հասարակութեան և ոչ լրատվութեան մէջ։ Այդ անկարգութիւնների վերա ուշադրութիւն չեն դարձնում, մտածելով, որ դրանք կը վերջանան այնպէս, ինչպէս վերջացել են Բ. Դրան անապատութեան շնորհիւ ծագած անբաւականութիւնները։

Հանգամանքները այնպէս են, որ Զէրնոգօրցիների և այրանցիների մէջ ծագած անբաւականութիւնները կարող են միջազգային խնդրված մի խնդիր դառնալ։ Ի հարկէ այդ խնդիրը չէ կարող դառնալ եւրոպական խաղաղութեանը, բայց եւրոպական դիպլոմատիան ստիպված կը լինի բաւական շատ աշխատել այդ խնդիրը լուծելու համար։ Անկասկած է, որ Բ. Դուռը ինքը չի աշխատի համոզել այրանցիներին, որ նրանք զէնքը դրեն և յանձնեն Զէրնոգօրցիային այն երկիրը, որ թիւրքիան նրան զիջել է։ Կ. Պոլսի կառավարութիւնը կամ չէ կամենում, կամ անկարող է կատարել այն պարտականութիւնը, որ դրել է նրա վրա Բերլինի դաշնագիրը։ Որովհետև միջազգային վէճերը անհնարաւոր պէտք է չը մնան, ուրեմն եւրոպան ստիպված կը լինի թիւրքիայի վրա դրած պարտականութեան իրագործելը ուրիշին յանձնել։

Այն պարտականութիւնը, որ պէտք է կատարէին Մուխտար-փաշայի զորքերը, այժմ պէտք է յանձնել միջազգային զինուորական ոյժերին, բայց դրա իրագործելը շատ դժուար է։ Դրեթէ անկարելի է զանազան ցեղերին և ազգութիւններին պատկանող զինուորներից մի զորաբաժին կազմել։

Մի որ և է պետութեան զորքերի Ալբանիա ուղարկելը, այժմեան միջազգային յարաբերութիւնները ի նկատի ունենալով, նշանակէ անկարելի է։ Անգլիան և Ռուսաստանը չեն համաձայնի, որ այդ գործը աւստրիական զորքերը կատարին։ Ռուսաց զորքերի մասին խօսելն անգամ աւելորդ է։ Ֆրանսիան և Գերմանիան չեն ընդունի այդ յանձնարարութիւնը, իսկ Իտալիան զորքերի միջամտութիւնը Աւստրո-Ունգարիան չի համբերի։

Զէրնոգօրցիայի և Այրանիայի հարցի վճռելը եւրոպական միջամտութեան օգնութեամբ անհրաժեշտ է, բայց այդ նպատակին հասնելու համար առժամանակ միջոցներ չը կան։ Այդ հարցը լուծելու համար եւրոպական դիպլոմատիան ստիպված կը լինի այս ամառ բաւական շատ աշխատել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի։ Երէկ, մայիսի 1-ին ուղեորվեցաւ արտասահման դեսպան Օրլով։

ՕԴԷՍՍԱ, 1 մայիսի։ Երէկ Նախիմովի շրջանում բերեց սպանված Կուտերսելի դիակը։ Այսօր առաւօտ Կուտերսելի մարմինը թաղեցին պատշաճաւոր դիւռորական պատուով։ Ներկայ էին իշխանաւորներ, քաղաքային ներկայացուցիչներ, դեսպան Նովիկով և բազմաթիւ ժողովուրդ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր, 87 կ., երկրորդ 92 ր. 62 կ., երրորդ 93 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 226 ր. 75 կ., երկրորդ 221 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 7 ր. 75 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 25,35 պէնս, ռուսաց 100 ր. Գերմանիայի վրա արժէ 127 մարկ, 56 56 պֆ., Համբուրգի վրա 215 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 266 ֆր. 75 սանտիմ։ Բրոսայի տրամադրութիւնը հանգիստ է։

ԼՈՆԴՈՆ, 3/15 մայիսի։ Ցայտնված է 314 լակ բուբիայի 4½ տոկոսաւոր փոխառութեան հրատարակութեան մասին։ Այդ գումարը հաւասարվում է 2,608,333 ֆունտ ստերլինգի։ Այդ փոխառութիւնը արված է ի նկատ ունենալով ամրանական պատերազմի պատճառով ծախսերի շատանալը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի։ Այսօր զինաթաղ է լինելու։

ՕԴԷՍՍԱ, 3 մայիսի։ Դեսպան Նովիկով «ՄԱՆ Իշխան Կոնստանտին» նաւով իր ընտանիքի հետ ուղեորվեցաւ Կ. Պոլիս։

ՐԻԳԱ, 3 մայիսի։ Հրդեհը ոչնչացրեց կաներվի պահեստը։

ԻԿՈՒՌՏԿ, 2 մայիսի։ Ներքինիցից ստացված տեղեկութիւնների համեմատ Մանջուրիայում թափառում են ազգիացիներ։ Այժմ Մանջուրիայում հարիւր հազարներով բոլոր ձիաների վրա դրոշմներ են դնում։ Կարելի է մտածել, որ այդպիսի տու քիր չը վճարելու նպատակով շատերը անցնում են մեր սահմանները ժամանակաւորապէս։ Տարբարդարար այժմ երբ այդպիսի տեղեկութիւնները չափազանց հնաբերքիր են, մեր միակ լրագիրը «Սիբիր» արգելված է և չէ հրատարակվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի։ Երէկվան մարդասան գինեվաճառը շատ գեղեցիկ էր։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՍՏՐՈՒՆԻ